

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆՐԱՅԻՆ
ԻՐԱԶԵԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ-ԲԸԱՀԾՁԲ-17/8**

ք. Երևան

«15» *ֆեբրվար* 2017 թ.

«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ Ծառայությունը», ի դեմս **ծառայության աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի**, որը գործում է **ծառայության կանոնադրության** հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նորք» **սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»** հիմնադրամ-ը, ի դեմս **Հիմնադրամի** տնօրեն **Ա. Աբրահամյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «**Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման»** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:


2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:



2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **44120400 (քառասունչորս միլիոն հարյուր քսան հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն **ոչ ուշ քան տվյալ տարվա Դեկտեմբերի 25-ը**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացույցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև 01.01.2017թ.-ից մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556652
ՀՎՀՀ 02505511

ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Նորք» սոցիալական
ծառայությունների տեխնոլոգիական և
իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլենցի 68
«Հայէկոնտմբանկ» ԲԲԸ, Ջեյթուն մ/6
Հ/Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Տնօրեն



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅ ԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր				
2017	թվականի	ընթացքում	կենսաթոշակային	համակարգի
հանրային իրազեկման աշխատանքների գծով նախատեսվում է իրականացնել Հայաստանի սոցիալական ապահովության ոլորտի, ներառյալ բաշխողական կենսաթոշակային համակարգի և կուտակային կենսաթոշակային բաղադրիչի վերաբերյալ հանրային իրազեկման ծրագրեր՝ հետևյալ ուղղություններով.				
• «114 թեժ գիծ» ծառայություն				
114 թեժ գիծը քաղաքացիներին կապահովի շարունակական խորհրդատվությամբ սոցիալական ապահովության ողջ ոլորտում, ներառյալ բաշխողական կենսաթոշակային համակարգի և կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, այդ թվում՝				
1) սոցիալական ոլորտի վերաբերյալ քաղաքացիների հեռախոսազանգերի (բողոքների) գրանցման համակարգի շարունակական գործարկում, քաղաքացիների հեռախոսազանգերի (բողոքների) ընդունում և համապատասխան ընթացքի ապահովում՝ ըստ անհրաժեշտության ապահովելով հետադարձ կապ,				
2) Հաճախ տրվող հարցերի շարունակական թարմացում՝ ըստ թեժ գիծ ծառայությանը ստացվող հարցադրումների, թարմացվող ՀՏՀ-ի հիման վրա՝ համապատասխան իրազեկող նյութերի և հոդվածների տարածում մամուլի և տեղեկատվության տարածման էլեկտրոնային գործիքների միջոցներով:				
3) 24/7 աշխատանքային ռեժիմի պահպանում՝ քաղաքացիների համար ստեղծելով հնարավորություն՝ իրենց հուզող հարցերը ներկայացնել նաև ոչ աշխատանքային ժամերին:				
4) Ստացված հաղորդագրությունների վերծանում, մուտքագրում շտեմարան, հետադարձ կապի միջոցով քաղաքացիներին հուզող հարցերի վերաբերյալ				

պարզաբանումների տրամադրում:

5) Հայաստանի սոցիալական թեժ գծի անխափան աշխատանքի ապահովում՝ տեխնիկական և ծրագրային շարունակական բարելավումների և պրոֆիլակտիկ միջոցառումների ձեռնարկման միջոցով:

6) Սոցիալական ոլորտի «114 թեժ գիծ» ծառայության աշխատանքների կանոնակարգման, ծառայության ֆունկցիոնալ գործառույթների և աշխատանքի կազմակերպման ձևաչափի շարունակական բարելավում և կատարելագործում:

7) Զանգերի քանակի և հարցերի հիմնական ուղղությունների վերաբերյալ ամսական հաշվետվությունների գեներացում զանգերի գրանցման էլեկտրոնային համակարգից, տվյալների վերլուծություն և հարցերի խմբավորում:

8) Թեժ գծին ստացված բողոքների և դրանցից յուրաքանչյուրին տրված ընթացքի վերաբերյալ առանձին հաշվետվությունների կազմում՝ ըստ ԱՍՀՆ ենթակառուցվածքների՝ ՍԱՊԾ, ԲՍՓՀ, ՄԾՏԳ, ԶՊԳ:

9) Ամսական հաշվետվությունների ներկայացում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ ներառելով զանգերի քանակի և ուղղությունների մասին տեղեկությունները, ինչպես նաև առանձին՝ բողոքների և դրանցից յուրաքանչյուրին տրված ընթացքի մասին կազմվող էլեկտրոնային մատյանները:

Արդյունքում նախատեսվում է սպասարկել շուրջ 60 000 հեռախոսազանգ:

Հեռախոսազանգերի թիվը կանխատեսվել է՝ նախորդ տարվա միտումներից ելնելով:

• www.ePension.am սոցիալական պորտալի վարում (համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի)

Միասնական սոցիալական պորտալը կծառայի ամենօրյա թարմացվող տեղեկատվության տրամադրմանը, մասնավորապես՝ կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

1) Ըստ անհրաժեշտության՝ պորտալում տեղակայված (գործող)՝ կուտակային կենսաթոշակի, աշխատանքային կենսաթոշակի չափի, եկամտային հարկի, աշխատավարձի, սոցիալական վճարի հաշվիչների թարմացում՝ օրենսդրական փոփոխություններին համապատասխան,

2) Նոր հաշվիչների մշակում և տեղադրում՝ ըստ անհրաժեշտության,

3) Պորտալի բովանդակության շարունակական թարմացում, այդ թվում Սոցիալական պաշտպանության բնագավառում վարվող քաղաքականության, իրականացվող բարեփոխումների և դրանց հիմնավորումների, Ֆինանսական գրագիտության և կուտակային բաղադրիչի թեմաներով այլ նոր նյութերի (վերլուծություններ, իրազեկման և ուսուցողական նյութեր, հոդվածներ, ներկայացումներ (պրեզենտացիաներ), տեսանյութեր և այլն) մշակում և տեղադրում պորտալում, տարածում սոցիալական ցանցերի միջոցով՝ նվազագույնը՝ 30 նոր նյութի մշակում 2017թ. ընթացքում,

4) Պորտալի «Առցանց խորհրդատու» ծառայության վարում(որի շրջանակներում անձը կարող է պորտալի միջոցով ներկայացնել հարց և առցանց ռեժիմում ստանալ պատասխան), 2017թ. ընթացքում նվազագույնը 1500 հարցման պատասխանում առցանց ռեժիմում (ընդ որում, եթե հարցումը ուղարկվում է ոչ աշխատանքային ժամի, ապա հարցման պատասխանը, հաջորդ օրը, ուղարկվում է նրա էլեկտրոնային փոստին),

Առցանց եղանակով հարցումների թիվը կանխատեսվել է՝ նախորդ տարվա միտումներից ելնելով:

5) կուտակային բաղադրիչի մասնակիցների հասանելիության ապահովում անհատական կենսաթոշակային հաշիվների «Իմ հաշիվը» համակարգին Պորտալի միջոցով:

6) Երեխայի ծննդյան միանվագ նպաստի առցանց դիմումի հասանելիության ապահովում Պորտալի միջոցով:

• Հասարակայնության հետ կապեր (PR)

Հիմնադրամի իրազեկման գործառույթների ապահովման նպատակով կնախագծվեն և կիրադրվեն հաղորդակցության և PR միջոցառումներ, այդ թվում՝

1) Սոցիալական պաշտպանության բնագավառում վարվող քաղաքականության, իրականացվող բարեփոխումների վերաբերյալ մամուլի հաղորդագրությունների պատրաստում և տարածում՝ 2017թ. ընթացքում, նվազագույնը 12 մամուլի հաղորդագրություն,

2) սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող